**«Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ» ծրագրի շրջանակներում « Թիվ 2 տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող միջոցառումների վերաբերյալ**

(հունվար-հունիս 2026թ.)

<<Երևանի թիվ 2 տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն>> ՊՈԱԿ-ը իր գործունեությունն իրականացրել է՝ նպատակ ունենալով ապահովել կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների և սաների կրթության մատչելիությունը, ներառականությունն ու արդյունավետ կազմակերպումը:Հաշվետու ժամանակահատվածում թիվ 2 ՏՄԱԿ-ի տնօրենի ,տեղակալների և մասնագետների կողմից իրականացվել են.

Կրթական կարիքների գնահատման,

Մասնագիտական աջակցության,

Խորհրդատվության,

Վերապատրաստման,

Մշտադիտարկման ,

Բովանդակային մշակումների,

Ժողով-քննարկումների,

Համագործակցության աշխատանքներ:

Թիվ 2 ՏՄԱԿ-ի կողմից իրականացվում են աշակերտների և սաների կրթական կարիքների համակողմանի գնահատում, ուսումնասիրվում են նրանց ուժեղ կողմերը, դժվարություններն ու զարգացման առանձնահատկությունները, որոնց հիման վրա կազմակերպվում և տրամադրվում են համապատասխան մանկավարժահոգեբանական աջակցություն: ՏՄԱԿ-ի գործունեության կարևոր

ուղղություններից են վերապատրաստումների, խորհրդատվությունների, մշտադիտարկումների, բովանդակային մշակումների,համագործակցության և մասնագիտական ժողով- քննարկումների իրականացումը:Թիվ 2 ՏՄԱԿ-ը շարունակաբար ձգտում է բարձրացնել մատուցվող ծառայությունների որակը՝ նպաստելով յուրաքանչյուր աշակերտի և սանի ներուժի բացահայտմանը, ինքնուրույնության զարգացմանը և կրթական գործընթացում մասնակցությանը:

«Երևանի թիվ 2 տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ին ամրագրված է .

| | | |
|---|---|---|
| • 44 ՊՈԱԿ և 10 ոչ պետական լիցենզավորված հանրակրթական ուսումնական հաստատություններ(ընդհանուր՝36995 աշակերտ) | • 33 ՀՈԱԿ և 20 ոչ պետական նախադպրոցակա նուսումնական հաստատություններ (ընդհանուր՝ 9453 սան) | • 6 ՄԿՈՒ(ընդհանուր՝ 2771 աշակերտ) |

**1. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի (ԿԱՊԿ,ԿՁԱՊԿ) գնահատում**

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների և սաների կրթական կարիքների գնահատում: Գնահատման գործընթացն իրականացվել է բազմամասնագիտական թիմի կողմից՝ պահպանելով մասնագիտական սկզբունքները:

Գնահատումների արդյունքում տրամադրվել են առաջարկություններ՝ ուղղված աշակերտների և սաների կրթական գործընթացի արդյունավետ կազմակերպմանը:

<u>Հաշվետու ժամանակահատվածում</u> «Երևանի թիվ 2 տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ը իրականացրել է

կրթության առանձնահատուկ պայմանների և կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների և սաների թվով **269** գնահատում .

| ԿԱՊԿ ունեցող աշակերտ | ԿԶԱՊԿ ունեցող սան |
|---|---|
| **174** | **95** |

## 2. Մանկավարժահոգեբանական ծառայությունների մատուցում

Հաշվետու ժամանակահատվածում թիվ 2 ՏՄԱԿ-ի սպասարկման տարածքի հանրակրթական դպրոցներում և Ն/Դ ուսումնական հաստատություններում սովորում են կրթության առանձնահատուկ պայմանների և կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտներ և սաներ, ընդհանուր՝ **1214**

30.06.2026 թ-ի դրությամբ թիվ 2 ՏՄԱԿ-ը աջակցություն է տրամադրել թիվ 100, 177, 87, 116, 192, 153, 195, 196, 104, 124, 102, 180, 185, 111, 121, 191, 162, 168, 93, 131,174,199,138,146,155,122,108,89,179,90,184,22,156,176,200,126,171,170,94,92,188, 189 դպրոցներում, ընդհանուր՝ **908 ԿԱՊԿ** ունեցող աշակերտի:

30.06.2026 թ-ի դրությամբ թիվ 2 ՏՄԱԿ-ը աջակցություն է տրամադրել թիվ 43,81,82,45,48,62,52,58,46,36,50,56,53,60,47,44,61,35,38 ՆՈՒՀ-երում,ընդհանուր՝ **299 ԿԶԱՊԿ** ունեցող սանի:

30.06.2026 թ-ի դրությամբ թիվ 2 ՏՄԱԿ-ը աջակցություն է տրամադրել Երևանի N6 պետական արհեստագործական ուսումնարանում, ընդհանուր՝ **7 ԿԱՊԿ** ունեցող աշակերտի:

Հաշվետու ժամանակահատվածում թիվ 2 ՏՄԱԿ-ի սպասարկման տարածքի հանրակրթական դպրոցներում և Ն/Դ ուսումնական հաստատություններում աջակցող մասնագետները իրականացրել են.

.Անհատական և խմբային պարապմունքներ․խոսքի, հաղորդակցման, ճանաչողական,վարքային և սոցիալական հմտությունների զարգացմանն ուղղված աշխատանքներ

Մանկավարժների ,մասնագետների և դաստիարակների հետ համատեղ աջակցության ռազմավարությունների մշակում

.Եռակողմ(ՏՄԱԿ-դպրոց/ՆՈՒՀ-ծնող) ժողով-քննարկումներ

Աշխատանքներն ուղղված են եղել աշակերտների և սաների ներառման, կրթական գործընթացին մասնակցության և զարգացման հնարավորությունների ընդլայնմանը: Մանկավարժահոգեբանական աջակցության գործընթացը հստակ կառուցվածքային մոտեցում է,որը հիմնված է թիմային աշխատանքի վրա:Այն ապահովում է,որ յուրաքանչյուր աշակերտ կամ սան ստանա անհրաժեշտ մասնագիտական աջակցություն՝զարգանալու և ինտերգրվելու :

### 3. Կարողությունների զարգացում/ վերապատրաստումներ

«Երևանի թիվ 2 տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ը հաշվետու ժամանակահատվածում սպասարկման տարածքի հանրակրթական դպրոցներում և Ն/Դ ուսումնական հաստատություններում իրականացրել է թվով **162** վերապատրաստում:

Վերապատրաստումների թիվը / ՆՈւՀ /-**51**

Վերապատրաստումների թիվը /Դպրոց /- **109**

Վերապատրաստումների թիվը /ՄԿՈւ /- **2**

| ՀՀ | Վերապատրաստման թեմա | Վերապատրաստման մասնակից անձանց թիվ |
|---|---|---|
| 1 | <<ԱՌՂՊ>> | 44 |
| 2 | <<Մանկական վախեր,դրանց դրսևորումներնն ու հաղթահարման ուղիները>> | 37 |
| 3 | <<ՍՈՒԶՊ>> | 20 |
| 4 | <<Փաստաթղթերի վարման կարգ>> | 30 |
| 5 | <<Կրթության աջակցող միջոցներ և խելամիտ հարմարեցումներ>> | 1400 |
| 6 | <<Ուսուցիչ-աշակերտ դրական փոխհարաբերությունների հաստատում>> | 35 |
| 7 | <<Ուսումնական հաստատություններում երեխաների պաշտպանության հոգեսոցիալական աջակցության և հոգեկան առողջության դեպքերի արձագանքման և ուղղորդման մեխանիզմները >> | 710 |
| 8 | <<Տարիքային ճգնաժամեր >> | 22 |

Վերապատրաստումների հիմնական նպատակը մանկավարժների մասնագիտական կարողությունների զարգացումն է: ՏՄԱԿ-ի կողմից իրականացվող վերապատրաստումները նպաստում են կրթական գործընթացում միասնական մոտեցումների ձևավորմանը և կրթության որակի բարելավմանը:

## 4. Խորհրդատվություն

«Երևանի թիվ 2 տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ը հաշվետու ժամանակահատվածում սպասարկման տարածքի հանրակրթական դպրոցներում և Ն/Դ ուսումնական հաստատություններում տրամադրել է թվով **422** խորհրդատվություն:

- Խորհրդատվությունների թիվը/ ՆՈւՀ /-**204**
- Խորհրդատվությունների թիվը / Դպրոց /-**218**
- Խորհրդատվությունների թիվը / ՄԿՈւ /-**0**

| **Խորհրդատվությունների ընդհանուր թեմաներ** |
|---|
| • «Գնահատման արդյունքների քննարկում, և հետագա աշխատանքների արդյունավետ կազմակերպում » |
| • «Խելամիտ հարմարեցումների վերաբերյալ» |
| • «Գնահատման գործընթացի կազմակերպման հաջորդական քայլերի իրազեկում» |
| |
| • «Թիմային աշխատանքի արդյունավետության բարձրացում,ծնողների հետ աշխատանքի միասնական ռազմավարություն» |
| • «ԱՈՒՊ և ԱՈՒԷՉՊ ձևաթղթի շուրջ խորհրդատվություն» |
| • «Քննարկում-խորհրդատվություն ԿՉԱՊԿ և ԿԱՊԿ ունեցող աշակերտների և սաների ծնողների հետ» |
| • «Խմբային պարապմունքների կազմակերպման |

| |
|---|
| առանձնահատկությունները ԿԱՊԿ և ԿԶԱՊԿ ունեցող աշակերտների և սաների հետ» |
| • «Սովորող-ծնող-ուսուցիչ համագործակցության կարևորությունը սովորողի կրթության կազմակերպման գործում» |
| • «Սաներին տրամադրվող աջակցության նպատակների, առաջընթացի,պարապմունքներին ներգրավվածության և մասնակցության քննարկում>> |
| • «Մանկավարժ-ծնող համագործակցության կարևորությունը ուսումնական գործընթացում» |
| • «Սանի մոտ առկա · ձեռքբերումների վերլուծություն ,հետագա աշխատանքների և կարճաժամկետ նպատակադրումների քննարկում» |
| • «Սաներին տրամադրվող աջակցության նպատակների, առաջընթացի,պարապմունքներին ներգրավվածության և մասնակցության քննարկում» |

| |
|---|
| • «Յուզակամային ոլորտի կարևորությունը խոսքի զարգացման գործընթացում» |
| • «Վարքային դժվարություններ ունեցող սաների հետ աշխատանքների կազմակերպումը խմբասենյակում» |
| • «Ծնող-սովորող-ուսուցիչ-մանկավարժ համագործակցության կարևորությունը կրթության կազմակերպման գործընթացում» |
| • «Հաղորդակցման դժվարություն ունեցող երեխայի ուսումնական գործընթացի և ինքնասպասարկման հմտությունների զարգացման ուղղությամբ արդյունավետ աշխատանքների շարունակությունը տանը» |

| |
|---|
| • «Աշակերտների և սաների կրթական և զարգացման արդյունքների քննարկում. ձեռքբերումներ և հետագա քայլեր,տարեվերջյան արդյունքների վերլուծություն և ամառային շրջանի առաջարկություններ » |
| • «Սանի ձեռքբերումների, դժվարությունների և հետագա զարգացման ուղղությունների քննարկում, դպրոցական կրթությանն անցնելու պատրաստվածության գնահատում և աջակցություն » |

**Խորհրդատվություն ստացած անձ** **Խորհրդատվություն ստացած անձանց թիվը**

| | |
|---|---|
| Վարչական անձնակազմ | 86 |
| Մանկավարժներ | 78 |

| | |
|---|---|
| Ուսուցչի օգնականներ | 53 |
| Բազմամասնագիտական թիմ | 210 |
| Դաստիարակներ | 59 |
| Դայակներ | 3 |
| Ծնողներ | 329 |

## 5. Մշտադիտարկում

«Երևանի թիվ 2 տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ը հաշվետու ժամանակահատվածում սպասարկման տարածքի հանրակրթական դպրոցներում և Ն/Դ ուսումնական հաստատություններում իրականացվել է թվով **98**մշտադիտարկում:

Մշտադիտարկումների թիվը / ՆՈւՀ /-**34**

Մշտադիտարկումների թիվը /Դպրոց /-**62**

Մշտադիտարկումների թիվը / ՄԿՈւ /-**2**

Թիվ 2 ՏՄԱԿ-ի տնօրենի և տեղակալների կողմից իրականացվել են պարբերական մշտադիտարկումներ սպասարկվող նախադպրոցական ուսումնական հաստատություններում և հանրակրթական դպրոցներում՝ ներառական կրթության գործընթացի արդյունավետության գնահատման նպատակով:
Այցերի շրջանակում իրականացվել են դասերի և պարապմունքների դիտարկումներ, աշխատանքային քննարկումներ ուսումնական հաստատությունների վարչական անձնակազմի, մանկավարժների, ուսուցչի օգնականների,դաստիարակների և մասնագետների հետ: Քննարկվել են առկա ձեռքբերումները, դժվարությունները և դրանց հաղթահարման հնարավոր ուղիները:
Մշտադիտարկումների արդյունքների հիման վրա տրամադրվել են մասնագիտական առաջարկություններ՝ ուղղված ներառական կրթության որակի բարձրացմանը:

## 6.Խելամիտ հարմարեցումներ

- Ուսումնական հաստատությունների թիվը,որտեղ ապահովվել են խելամիտ հարմարեցումներ

| Դպրոց | ՆՈՒՀ |
|---|---|
| 26 | 15 |

- Խելամիտ հարմարեցումներ ստացած աշակերտների և սաների թիվը

| Դպրոց | ՆՈՒՀ |
|---|---|
| 466 | 150 |

Խելամիտ հարմարեցումները ներառական կրթության կարևոր բաղադրիչներից են, որոնք նպաստում են յուրաքանչյուր աշակերտի կամ սանի կրթական գործընթացին լիարժեք մասնակցությանը և առաջընթացին:Թիվ 2 ՏՄԱԿ-ի կողմից իրականացվող մշտադիտարկումների ընթացքում սպասարկման տարածքի հանրակրթական դպրոցներում և նախադպրոցական ուսումնական հաստատություններում առանձնահատուկ ուշադրություն է դարձվում կիրառվող խելամիտ հարմարեցումների արդյունավետությանը և դրանց համապատասխանությանը յուրաքանչյուր աշակերտի և սանի անհատական կարիքներին:Անհրաժեշտության դեպքում ՏՄԱԿ-ի մասնագետների կողմից տրամադրվում են մասնագիտական խորհրդատվություններ՝ ուղղված խելամիտ հարմարեցումների առավել արդյունավետ կիրառմանը:

## 7. Համագործակցություն

Համագործակցությունը հանդիսանում է թիվ 2 ՏՄԱԿ-ի գործունեության առանցքային ուղղություններից մեկը և նպաստում է կրթական միջավայրում ներառականության ամրապնդմանը, փորձի փոխանակմանը և հանագործակցային աշխատանքների իրականացմանը :

Եվրոպայի խորհրդի «Մարդու սոցիալական իրավունքների ամրապնդումը Հայաստանում» ծրագրի շրջանակներում փետրվարի 20-21-ը կազմակերպվեց աշխատաժողով՝ «Մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈՒ) կարողությունների զարգացում՝ հաշմանդամություն ունեցող անձանց ներառական կրթության ոլորտում՝ Եվրոպական սոցիալական խարտիայի պահանջներին համապատասխան» թեմայով, որը նպաստեց փորձի փոխանակմանը և մասնագետների միջև արդյունավետ համագործակցության ամրապնդմանը:

Թիվ 2 ՏՄԱԿ-ում մարտի 23-ին տեղի ունեցավ «Սոցիալական հմտությունների ձևավորումը աուտիզմ ունեցող երեխաների զարգացման գործընթացում» թեմայով վերապատրաստում, որը միտված էր ՏՄԱԿ-ի մանկավարժների մասնագիտական կարողությունների զարգացմանը և գործնական հմտությունների հարստացմանը:Վերապատրաստման ընթացքում ներկայացվեց սոցիալական հմտությունները կրթական հաստատությունում քարտային զարգացնող խաղը, որը ներկայացրեց Աուտիզմ ազգային հիմնադրամի արտաքին կապերի և հանրային իրազեկման գծով ղեկավար, էրգոթերապիստ Ինեսսա Հարությունյանը:Քննարկվեցին սոցիալական հմտությունների ձևավորման կարևորությունն ու դրանց դերը երեխայի լիարժեք սոցիալականացման և միջանձնային առողջ փոխհարաբերությունների կառուցման գործում:

Թիվ 2 Տարածքային մանկավարժահոգեբանական աջակցման կենտրոնում տեղի ունեցավ «Կոգնիտիվ ռեսուրսներ. արդի մարտահրավերները», «Ուսուցման նեյրոհոգեբանական մեխանիզմները» և «Նեյրոհոգեբանական գնահատման մեթոդները» թեմաներով մասնագիտական թրեյնինգներ: Թրեյնինգները վարում էր հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, նյարդաբան, նեյրոհոգեբան, բժշկական գիտությունների թեկնածու Արսեն Լոքյանը: Միջոցառումը կարևոր հարթակ դարձավ կրթության և աջակցության ոլորտի մասնագետների միջև համագործակցության ամրապնդման, փորձի փոխանակման և մասնագիտական գիտելիքների հարստացման համար: Դասընթացների ընթացքում քննարկվեցին կոգնիտիվ գործընթացների զարգացման արդի մոտեցումները, սովորողների կրթական առաջընթացի վրա ազդող գործոնները: Մասնակիցները

հնարավորություն ունեցան ծանոթանալու նեյրոհոգեբանության ժամանակակից ձեռքբերումներին, քննարկելու աշխատանքում հանդիպող դեպքերը:

Նման նախաձեռնությունները նպաստում են մասնագետների միջև համագործակցության զարգացմանը, մասնագիտական ներուժի հզորացմանը:

«Երևանի թիվ 2 տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ը շարունակելու է իրականացնել իր առջև դրված գործառույթները՝ ապահովելով ներառական կրթության արդյունավետությունը, հասանելիությունը և որակը :

| | |
|---|---|
| Կենտրոնի անվանումը՝ | «Երևանի թիվ 2տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» ՊՈԱԿ |

Տնօրեն՝ ______________ Լ.Արտաշեսյան

(ստորագրություն) (անուն, ազգանուն)

Կ.Տ.

«01» հուլիսի 2026թ.